

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2022-2027 թվականների

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ա.Առուշանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու թիվ 67-Ա որոշմամբ

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

1. Նախաբան	2
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակը	8
2.2. Համայնքում իրականացվող ծրագրերը	14
2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	19
2.4. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	28
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	30
3.1. Համայնքի զարգացման տեսլական	30
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	39
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	

Նախաբան

Գորիս համայնքը գտնվում է Սյունիքի մրազի հյուսիս-արևելյան մասում: Գորիսը հիմնադրվել է պատմական Հայաստանի Սյունիքի նահանգի Հաբանդ գավառում, Վարարակն գետի ձախ ափին, Ջազեձորի հովտում: Պատմական աղբյուրներում Գորիսն առաջին անգամ նշվում է Ստեփանոս Օրբելյանի կողմից Հաբանդ գավառի բնակավայրերի ցուցակում: 1850-ական թթ. Վարարակն գետի աջափնյա տարածության վրա սկսվում է Նորի Գորիսի հիմնադրման աշխատանքները: Քաղաքի զարգացմանը հատկապես նպաստում է 1869-1877թթ Շուշի Գորիս խճուղու կառուցումը: Գտնվելով կարևոր ճանապարհների հանգուցակետում՝ Գորիսն արագ կառուցապատվում է և 1885թ. պաշտոնապես ստանում քաղաքի կարգավիճակ, դառնալով Զանգեզուրի գավառի վարչական, առևտրային և մշակութային կենտրոնը:

Գորիս անվան հնագույն հիշատակումը գալիս է ուրարտական ժամանակաշրջանից: Ռուսա Ա թագավորը մ.թ.ա. 8-րդ դարում թողել է սեպագիր արձանագրություն, ուր իր նվաճած 23 երկրների մեջ նշում է Գուրիայա երկիրը: Գիտնականները գտնում են, որ դա Գորիսն է: Գորիսում գտնվել է նաև Արտաշես Ա թագավորի (մ.թ.ա. 189-մ.թ.ա. 160) արամեերեն արձանագրության սահմանաքար: Գորիսի անգուգական բնությունը, արժեքավոր պատմա-ճարտարապետական հուշարձանների առկայությունը, որոնցից հատկապես արժեքավոր են բազմաթիվ բնական և արհեստական բնակելի քարայրներն ու տները, ինչպես նաև քաղաքի ինքնատիպ ճարտարապետական դեմքը՝ նպաստում են քաղաքի ներկայացմանը իբրև պատմամշակութային ուրույն ամբողջություն, որն իր հերթին նպաստում է տեղական ու օտարերկրյա զբոսաշրջության զարգացմանը:

Տարածաշրջանը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, Գորիսի հարակից տարածքները զարգացել են հիմնականում Երևանը Իրանին կապող ճանապարհի և Գորիս գյուղի արևմտյան եզրով՝ Վարարակն գետին զուգահեռ, անցնող առևտրական ճանապարհի խաչմերուկում, որը ճյուղավորվում էր Գորիսը հարավ-արևելքից շրջանցող, Նախիջևան-Ագուլիս-Պարտավ, հայտնի «ԱՂԻ» առևտրական ճանապարհից դեպի Կասպից ծով, առևտրական ճանապարհով միանալով Մետաքսի ճանապարհին: Տարածքը նշանակալի զարգացում է ապրել և հայտնի դառել 8-րդ դարում՝ շնորհիվ կրոնական և մշակութային կենտրոն Տաթևի վանական համալիրի: Մետաքսի և համեմունքների ճանապարհը, Միջպետական ճանապարհը ներկայումս անցնում է Գորիս քաղաքի միջով: Քաղաքին կից առկա է օդանավակայան, որը, սակայն, ներկայումս չի գործում: Քաղաքում են կենտրոնացած տարածաշրջանային որոշակի գործառույթներ՝ ներառելով մշակութային հաստատությունները, բուժական և սպասարկման հաստատությունների սովորական մասը:

Բալնեոլոգիական նշանակության հանքային ջրերի ելքեր կան Գորիս քաղաքի շրջակայքում: Այսպիսով, աշխարհագրական դիրքը, կլիմայաբուժության բարենպաստ պայմանները,

հարուստ պատմամշակութային հուշարձանների, հանքային ջրերի առկայությունը՝ համատեղված բնակլիմայական եզակի պայմանների հետ, ակտիվ գործոններ են Գորիս քաղաքը դարձնելու բազմաֆունկցիոնալ ռեկրեացիոն կենտրոն, բարձրացնելու քաղաքի և նրա կենտրոնի սոցիալական ակտիվության դերը, ինչը խթան կհանդիսանա ինչպես հենց քաղաքի, այնպես էլ վերջինիս բարենպաստ մատչելիության գոտում տեղակայված բնակավայրերի տնտեսական զարգացման համար: Գորիսի տրանսպորտային բարենպաստ մատչելիության բարելավում (որն ընդգրկում է ամբողջ Գորիսի տարածաշրջանը) նախատեսվում է Որոտան գետի ավազանի ռեկրեացիոն գոտու՝ Գորիսի ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպում:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2022-2027 թթ հնգամյա զարգացման ծրագրի նպատակն է սահմանել համայնքի զարգացման տեսլականը, նորարար մոտեցումներով և գաղափարներով ընդգծել դրանց հասնելու հստակ մեթոդներն ու ճանապարհները: Համայնքի զարգացման տեսլականի հիմքում բնակչի կյանքի որակի բարելավումն է, անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ապահովումը: Համայնքային խնդիրներին պետք է տրվեն իրատեսական լուծումներ՝ յուրաքանչյուրի համար ստեղծելով հավասար պայմաններ և հնարավորություններ, բարենպաստ և արդար միջավայր:

Համայնքի գերխնդիրն է ունենալ հարուստ ենթակառուցվածքներով, տնտեսապես ուժեղ և անվտանգ համայնք՝ նպաստելով բնաչության բարեկեցության շարունակական ավելացմանը: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել առկա ռեսուրսները, հնարավորությունները, զարգացման հեռանկարները, առանձնահատկությունները, հետպատերազմական իրողությունները, մարտահրավերները, ինչպես նաև պետական քաղաքականությունը: Ծրագրում նախանշված են հստակ գործողություններ, երկարաժամկետ և կարճաժամկետ ծրարգեր, որոնք նպատակաուղղված են համայնքի տնտեսական առաջընթացին, ենթակառուցվածքների զարգացմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, համայնքային տարբեր ոլորտների առաջխաղացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Բոլոր ջանքերը պետք է ուղղվեն համայնքի համաչափ զարգացմանը, բնակավայրերի՝ կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացմանը: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքում ակտիվ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները:

Գորիս համայնքի զարգացման գերակայությունները

- Պատերազմի հետևանքով առաջացած նոր իրողությունների, մարտահրավերների, ի հայտ եկած նոր հիմնախնդիրների գնահատում, կարիքների հաշվառում, անվտանգային միջավայրի ստեղծման ուղղությամբ ռազմավարական ծրագրերի իրականացում:


- Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված երկարաժամկետ արդյունք ապահովող ծրագրերի իրականացում
- Տեղական տնտեսության խթանում
- Ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, բիզնես-համայնք գործակցության խթանում
- Բնակավայրերի համաչափ զարգացման ապահովում, երկարաժամկետ արդյունք ապահովող ծրագրերի իրականացում, կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական ծրագրերի իրականացում: Բնակավայրերի բրենդավարում, հանրահռչակում:
- Զբոսաշրջության ոլորտում նոր ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում, նոր ծառայությունների խթանում
- Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության որակի շարունակական բարելավում
- Հանրային տրանսպորտային ցանցի արդիականացման ապահովում, ծառայության որակի շարունակական բարելավում
- Հանրային մասնակցության խթանում
- Մշակութային, սպորտային միջոցառումների մասսայականության ապահովում
- Կանաչ տարածքների պահպանում, ընդլայնում, պուրակների, զբոսայգիների վերակառուցում, կառուցում, նոր հանգստի գոտիների ստեղծում
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում
- Սոցիալական միջավայրի բարելավում, խոցելի խմբերի համար սոցիալական ծրագրերի կազմում, իրականացում
- Նախակրթարանների , մշակութային, սպորտային հաստատությունների շենքային պայմանների բարելավում:
- Արհեստների, արվեստների զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի իրականացում, մասսայականացման ապահովում
- Տեխնոլոգիաների կիրառման ապահովում տարբեր ոլորտներում, նորարարության խթանում
- Սպորտային հաստատությունների, խաղահրապարակների, ժամանցի վայրերի ավելացում, ծառայությունների որակի բարելավում
- Նախադպրոցական կրթության որակի բարձրացում, ներառականության խթանում

- Վերականգնվող էներգիայի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում, փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում:
- Ճանապարհային ցանցի բարելավում, փողոցների, բակերի հիմնանորոգում

Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքը ձևավորվել է 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Համայնքն ընդգրկում է թվով տասը բնակավայր՝ Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն և Քարահունջ, և զբաղեցնում 33604,01 հա տարածք (տե'ս Գծապատկեր 1.):

Գծապատկեր 1. Գորիս համայնքի վարչական տարածքը՝ ըստ առանձին բնակավայրերի, հա



ՀՀ ոստիկանության և անձնագրային ու վիզաների վարչության տրամադրած տվյալների համաձայն՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ Գորիս համայնքում բնակչության թիվը կազմել է 29721 մարդ (կանայք՝ 51%, տղամարդիկ՝ 49%), որի 72,5%-ը կազմում է Գորիս կենտրոնական բնակավայրի բնակչությունը (տե'ս Աղյուսակ 1.):

Համայնքում վախստականի կարգավիճակ ունեն 2530 մարդ՝ Արցախից տեղահանված

Աղյուսակ 1. Գործիս համայնքի ժողովրդագրական ցուցանիշները՝ ըստ առանձին բնակավայրերի, մարդ (2022թ. Հունվարի 1-ի դրությամբ)

Ընդամենը, համայնք		Գորիս	Ակներ	Բարձրավան		Խնձորենկ		Հարթաշեն		Ներքին		Խնձորենկ		Շուտնուխ	Որոտան	Վերիշեն		Քարահունջ	
Մշտական	Ընդ ամե նը	29076	21062	111 8	110	1976	681	241	150	289	2079	1370							
	Իգ.	14640	10689	552	52	977	323	112	69	157	1045	664							
	Ար.	14436	10373	566	58	999	358	129	81	132	1034	706							
Մինչև 1 տարեկա ն		300	191	15	1	29	7	7	2	2	24	22							
1-2 տարեկա ն		748	534	36	4	51	13	9	3	6	54	38							
3-5 տարեկա ն		1111	799	37	6	86	25	12	3	15	74	54							
6-9 տարեկա ն		1465	1085	62	3	78	33	9	5	17	109	64							
10-14 տարեկա ն		2008	1433	87	1	136	38	17	10	31	156	99							
15-17 տարեկա ն		1031	712	37	3	84	38	7	3	9	81	57							

18-62 տարեկան	18127	13046	711	71	1249	429	168	110	183	1293	867
63-74 տարեկան	3120	2393	89	8	178	69	11	11	21	218	122
75 նավելիս տարեկան	1166	869	44	13	85	29	1	3	5	70	47

Համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակը

Գորիս համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 2, 211 մլրդ դրամ, սեփական եկամուտների բաժինը ընդհանուր եկամուտների մեջ՝ 20,3 %:

Գորիս համայնքում գործող գործատուների թվաքանակը կազմում է 380, որից՝ կազմակերպություններ՝ 210, անհատ ձեռնարկատեր՝ 170:

Գորիս համայնքն ընդգրկող վարչական տարածքում գործող կազմակերպությունները՝ 210, անհատ ձեռնարկատեր՝ 590:

Գորիս համայնքի հիմնական արդյունաբերական (արտադրական) ձեռնարկությունները, արդյունաբերական արտադրանքը, հիմնական սպառման շուկաները

- Էլ. էներգիայի արտադրություն փոքր ՀէԿ-եր
- Շինանյութերի արտադրություն, մասնավորապես, մետաղյա կոնստրուկցիաների, սենդվիչների արտադրություն
- Գործվածքների (մանածագործական) արտադրություն
- Քիմիական մանրաթելերի արտադրություն
- 3D տպիչների արտադրություն
- Սննդի, սննդամթերքի արտադրություն
- Գյուղմթերքի արտադրություն
- Զուգացուցիչ ըմպելիքների, գարեջրի արտադրություն
- Կաթի, կաթնամթերքի արտադրություն
- Կահույքի արտադրություն
- Էլ. սարքավորումների արտադրություն

Արտադրված արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում՝ ՀՀ տարածքում, ԵՄ, ԵՏՄ երկրներում:

Համայնքի ծառայությունների, սպասարկման բնագավառի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները

- Հյուրանոցային հյուրատնային ծառայությունների կազմակերպում
- Հանրային սննդի կազմակերպում (ոլորտում ներառված են 23 տնտեսվարող սուբյեկտներ)
- Զբոսաշրջային տուրերի, ծառայությունների կազմակերպում
- Փաստաբանական ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Նոտարական և թարգմանչական ծառայություններ
- Կրթամշակութային

Համայնքի գյուղատնտեսական արտադրանքի հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2-ում և 3-ում:

Աղյուսակ 2. Գորիս համայնքի անասնազլխաքանակի առկա ցուցանիշները՝ ըստ

հ / հ	Բնակավայրի անվանումը	Խոշոր եղջերավոր անասուն	Ոչխար(գլուխ)	Թռչուն(թև)	Մեղու(փեթակ)	Խոզ(գլուխ)	Մսի արտադր. (տոննա)	Կաթի արտադր. (տոննա)	Անասնակեր(տոննա)
-------	----------------------	-------------------------	--------------	------------	--------------	------------	---------------------	----------------------	------------------

բնակավայրերի (2022թ.)

		Ընդամենը(գլուխ)	Որից կով(գլուխ)							
1	Գորիս	1278	634	4755	5350	4520	531	80	1300	1800
2	Խնձորեսկ	2467	1378	9106	5615	399	2036	155	2750	4500
3	Վերիշեն	1309	650	2148	1969	478	258	80	1300	1750
4	Ակներ	931	489	873	2276	235	91	53	880	1600
5	Ն. Խնձորեսկ	249	120	1350	277	60	123	15	240	250
6	Հարթաշեն	1360	490	720	2870	290	685	104	1000	4000
7	Բարձրավան	117	97	62	155	80	35	3	200	350
8	Քարահունջ	1026	518	853	2092	462	169	61	1150	2150
9	Շուռնուխ	90	29	661	377	167	45	7	55	100
10	Որոտան	38	31	110	170	45	15	1	60	50

ԸՆԴԱՄԵՆԸ	9045	4436	20638	21151	6736	3988	559	8935	16550
----------	------	------	-------	-------	------	------	-----	------	-------

Աղյուսակ 3. Գորիս համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները ըստ բնակավայրերի (2017թ.)

h/ h	Բնակավայրի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Պտուղ և հատապտուղ	
		Ցանք (հա)	Համախառն բերքը (տոննա/)	Ցանք (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանք (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանք (հա)	Համախառն բերքը (տոննա)
1	Գորիս	750	1350	80	1440	32	450	53	657
2	Խնձորեսկ	920	1656	23	414	14	200	40	496
3	Վերիշեն	100	180	61	1100	12	156	26	322
4	Ակներ	15	27	42	788	7	66	25	310
5	Ն. Խնձորեսկ	400	720	5	86	6	30	3	37
6	Հարթաշեն	650	1170	25	450	17	160	45	558
7	Բարձրավան	162	291	5	100	5	10	12	148
8	Քարահունջ	600	1080	25	418	8	150	50	620
9	Շուռնուխ	116	209	7	133	3	14	6	74
10	Որոտան	0	0	7	133	3	14	27	335
ԸՆԴԱՄԵՆԸ		3713	6683	280	5062	107	1250	287	3557

Դպրոցական, նախադպրոցական և արտադրադրոցական կրթական հաստատություններ,
ԲՈԻՀ-եր

Աղյուսակ 4. Գորիս համայնքի դպրոցական հաստատություններում ընդգրկված աշակերտների թիվը

h/h	Բնակավայրը	Հաստատությունը	Քանի հոգու համար է նախատեսված	Ցուցակային թիվ
1.	Գորիս	«Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1100	776

2.	Գորիս	«Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	495	382
3.	Գորիս	«Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	972	675
4.	Գորիս	«Գորիսի թիվ 4 ավագ դպրոց» ՊՈԱԿ	350	330
5.	Գորիս	«Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	200	234
6.	Գորիս	«Գորիսի Սերո Խանգադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	715	508
7.	Ակնեք	«Ակնեքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	200	155
8.	Բարձրավան	«Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	45	5
9.	Խնձորեսկ	«Խնձորեսկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	440	250
10.	Հարթաշեն	«Հարթաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	320	103
11.	Ներքին Խնձորեսկ	«Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	50	24
12.	Շուռնուխ	«Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	45	15
13.	Որոտան	«Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	75	44
14.	Վերիշեն	«Վերիշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1176	337
15.	Քարահունջ	«Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	480	172

Աղյուսակ 5. Գորիս համայնքի նախադպրոցական հաստատություններում ընդգրկված
երեխաների թիվը և նախագծային հզորությունը

Խ/Խ	Բնակավայր ը	Հաստատությունը	Նախագծային հզորություն	Ցուցակային թիվ
1.	Գորիս	«Գորիս քաղաքի Վ. Սարգսյանի անվան թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	150	149
2.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	220	207
3.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	170	141
4.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	110	102

5.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 5 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	160	110
6.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	140	141
7.	Գորիս	«Գորիս քաղաքի թիվ 7 ՆՈՒՀ» ՀՈԱԿ	260	92
8.	Խնձորեսկ	«Խնձորեսկի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	120	74
9.	Ներքին Խնձորեսկ	«Ներքին Խնձորեսկի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	Ոչ տիպային հարմարեցված շենք է 10	12
10.	Վերիշեն	«Վերիշենի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	120	85
11.	Քարահունջ	«Քարահունջի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	50	43

Աղյուսակ 6. Գորիս համայնքի արտադարձական հաստատություններում ընդգրկվածների
թիվը

<i>հ/հ</i>	<i>Բնակավայրը</i>	<i>Հաստատությունը</i>	<i>Քանի հոգու համար է նախատեսված</i>	<i>Ցուցակային թիվ</i>
1.	Գորիս	«Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	200	118
2.	Գորիս	«Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	300	237
3.	Գորիս	«Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	200	190
4.	Գորիս	Երևանի գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղ	120	232
5.	Խնձորեսկ	«Խնձորեսկի Ա. Սաթունցի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	80	66

Աղյուսակ 7. Գորիս համայնքի ԲՈՒՀ-երում և միջին մասնագիտական հաստատություններում
ընդգրկվածների թիվը

<i>հ/հ</i>	<i>Բնակավայրը</i>	<i>Հաստատությունը</i>	<i>Քանի հոգու համար է նախատեսված</i>	<i>Ցուցակային թիվ</i>

1	Գորիս	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	1300	996
2	Գորիս	«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ	500	250
3	Գորիս	«Գորիսի պրոֆ. Իս. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	500	230
4	Գորիս	«Սյունիք» ինստիտուտ	140	134

Գորիս համայնքի առողջապահական հիմնարկներն ու հաստատությունները

Աղյուսակ 8. Գորիս համայնքի առողջապահական հաստատությունների տարեկան այցելուների և մահճակալների թիվը

h/h	Բնակավայրը	Հաստատությունը	Մահճակալների թիվ	Տարեկան այցելուների թիվ
1.	Գորիս	«Գորիս բժշկական կենտրոն» ՓԲԸ	90	14361
2.	Գորիս	«Ֆրանս-Հայկական սրտանոթային կենտրոն» ՊՀՀՀՄ	24	8000
3.	Գորիս	Արյան փոխներարկման կայան	0	350
4.	Գորիս	«Հիվանդություններ վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ Սյունիք մասնաճյուղ	0	1200
4.	Սկներ	Մուժմանկաբարձական կետ	0	832
5.	Բարձրավան	Մուժմանկաբարձական կետ	0	90
6.	Խնձորեսկ	«Առողջապահության առաջնայի պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	0	1518
7.	Հարթաշեն	Մուժմանկաբարձական կետ	0	556
8.	Ներքին Խնձորեսկ	Մուժմանկաբարձական կետ	0	156
9.	Շուռնուխ	Մուժմանկաբարձական կետ	0	123

10.	Որոտան	Մուծման կաբարձական կետ	0	210
11.	Վերիշեն	«Վերիշենի բուժամբուլատորիա» ՊՈԱԿ	0	1810
12.	Քարահունջ	Մուծման կաբարձական կետ	0	1061

Աղյուսակ 9. Գործազրկության և ըստ տնտեսության ոլորտների զբաղվածության
նկարագիրը

h/h			թվաքանակը/մարդ
1.	Գրանցված գործազուրկների թվաքանակը	Ընդամենը	676
		Արական	-
		Իգական	-
2.	Համայնքում զբաղված բնակչության թվաքանակը	Ընդամենը	6326
3.	Զբաղված բնակչության թվաքանակն ըստ ոլորտների	3.1 Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	2342
		3.3 Հանքագործական արդյունաբերություն	1
		3.4 Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝ գյուղ. հումքի մշակում	70
		3.5 Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	247
		3.6 Շինարարություն	104
		3.7 Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	75
		3.11 Տեղական ինքնակառավարում	97
		3.12 Կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն	748
		3.13 Առողջապահություն և սոցիալական ծառայություն	340
		3.14 Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ	66
		3.17 Տեղական ինքնակառավարման մարմիններում	97

Գործազրկության մակարդակը Գորիս քաղաքային բնակավայրում կազմում է 16,5%:

Համայնքում **ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների քանակը** 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 921 տ/տ, այդ թվում՝ Գորիս՝ 664, Ակներ՝ 36, Բարձրավան՝ 3, Խնձորեսկ՝ 49, Հարթաշեն՝ 25, Ներքին Խնձորեսկ՝ 4, Շուռնուխ՝ 3, Որոտան՝ 16, Վերիշեն՝ 80 և Քարահունջ՝ 57:

Համայնքում իրականացվող ծրագրերը

Աղյուսակ 10. Առաջիկա հինգ տարիների համար համայնքում նախատեսվող (շարունակվող) ծրագրերն ու միջոցառումները

Խ/Խ	Ծրագրի անվանումը	Ծրագրի նկարագիրը	Ազդեցությունը
	ԳՈՐԻՍ		
1.	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	Ժառանգության հանգույցի և ռեզենդերացիայի զբոսաշրջային երթուղու մշակման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալը. 1.Կենտրոնական զբոսայգու վերականգնում 2.Երիտասարդական զբոսայգու վերականգնում 3.Քաղաքի կենտրոնական մասի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնում 5. Համայնքի կոլորիտային կառույցների վերականգնում 6. Մշակութային հուշարձանների վերակառուցում, հանրային տարածքների վերականգնում, բարելավում 7.Զբոսաշրջային նշանակության վայրերի բարեկարգում 8. Հին Գորիսի վերականգնում՝ ըստ փուլերի	<u>Ուղղակի ազդեցությունը</u> Կենսապայմանների բարելավում՝ զբոսաշրջության անմիջական ազդեցության միջոցով (եկամուտներ և շահույթ զբոսաշրջության ոլորտից, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավում) <u>Երկրորդական ազդեցությունը</u> Ոչ զբոսաշրջային ոլորտների զարգացում (շինարարական աշխատանքներում տեղական ներուժի ներգրավում, հյուրանոցներին մատակարարող ֆերմերային տնտեսությունների զարգացում) <u>Դիմամիկ ազդեցությունը</u> Տեղական տնտեսության աճ
	➤ <i>Արհեստների և արվեստների մշակութային տարածքի ստեղծում, հուշանվերների արտադրություն, վաճառքի կազմակերպում</i> ➤ <i>Արկածային այգու հիմնում, արկածային տուրիզմի զարգացում</i> ➤ <i>Մշակութային միջոցառումների մասսայականացում, նոր խմբերի գործունեության</i>		

	<i>խթանում՝ ազգային երգ պար</i> ➤ <i>Ժամանցի կենտրոնների հիմնում</i> ➤ <i>Զբոսաշրջային ենթակառուցվածքների գովազդային արշավների կազմակերպում</i> ➤ <i>Երիտասարդական նախաձեռնությունների խթանում</i> ➤ <i>Գործիս համայնքի ճանապարհային ցանցի բարելավում, փողոցների , բակերի հիմնանորոգում</i> ➤ <i>Համայնքային ենթակառուցվածքի կապիտալ նորոգում</i> ➤ <i>Նորակալական կենտրոնների գործունեության խթանում, ՏՏ ոլորտի գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծում</i> ➤ <i>Բիզնեսի գործունեության խթանման համար բարենպաստ միջավայրի ստեղծում, Գործիսը ներդրողների համար գրավիչ դարձնող նախաձեռնությունների իրականացում</i> ➤ <i>Խաղահրապարակների, սպորտային միջոցառումների համար տարածքների, առանձին գոտիների ստեղծում</i> ➤ <i>Համայնքի կանաչ տարածքի վերականգնում, անտառային ծածկույթի աշխարահզրության ընդլայնում</i> ➤ <i>Արտաքին կապերի, քույր քաղաքաների հետ համագործակցային ծրագրերի ընդլայնում</i> ➤ <i>Տեղական տնտեսության զարգացման մոդելի ստեղծում, ընտանեկան բիզնեսների խթանում՝ համայնք -անհատ փոխգործակցության ձևաչափով</i> ➤ <i>Գործիս համայնքի ավնդույթների վերականգնում, քաղաքաշինության, մշակույթի, արվեստի և այլ ոլորտներում</i>
	ԱԿՆԵՐ
	➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակառուցվածքի շենքերում ➤ Արտավայրերի ճանապարհների բարելավում ➤ Խաղահրապարակի կառուցում ➤ Երիտասարդական կենտրոնի հիմնում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում ➤ Գյուղացիական առանձին տնտեսությունների բիզնես ծրագրերի խթանում, գյուղմթերքի բրենդավորում
	ՎԵՐԻՇԵՆ

	➤ Մանկապարտեզի շենքի վերակառուցում և հիմնանորոգում ➤ Խաղահրապարակի կառուցում ➤ Փայտամշակման, կավագործության կենտրոնի ստեղծում՝ արվեստների կենտրոնում ➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Խմելու ջրի կապտածի նորոգում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Արոտավայրեր տանող ճանապարհների բարելավում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ Գյուղացիական առանձին տնտեսությունների բիզնես ծրագրերի խթանում, գյուղմթերքի բրենդավորում /ճախաթթվի արտադրություն ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	<i>ՈՐՈՏՄԱՆ</i>
	➤ Վերաբնակեցման ծրագրերի շարունակականության ապահովում ➤ Խաղահրապարակի տեղադրում ➤ Մանկապարտեզի հիմնում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Գյուղացիական առանձին տնտեսությունների բիզնես ծրագրերի խթանում, գյուղմթերքի բրենդավորում/մեղվաբուծություն, հատապտուղների արտադրություն, չորանոցների հիմնում/ ➤ Բնակարանային ֆոնդի բարելավում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում

	<i>ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ</i>
	➤ Բնակելի թաղամասի կառուցում ➤ Մանկական խաղահրապարակի տեղադրում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Գյուղացիական առանձին տնտեսությունների բիզնես ծրագրերի խթանում, գյուղմթերքի բրենդավորում /պտղատու այգիների հիմնում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ Համայնքային կենտրոնի հիմնում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	<i>ԽՆՁՈՐԵՍԿ</i>
	➤ Հացահատիկային ընդեղենի արտադրություն, արտադրական ձեռնարկության կառուցում ➤ Տեխնոպարկի համալրում՝ բերքահավաք կոմբայնների ձեռքբերում ➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Խաղահրապարակի կահավորում ➤ Մանակապարտեզի շենքի հիմնանորոգում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արտավայրերի ճանապարհների բարելավում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ <i>Տուիզմի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում</i> ➤ Գյուղացիական առանձին տնտեսությունների բիզնես ծրագրերի խթանում, գյուղմթերքի բրենդավորում և վաճառքի կազմակերպում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	<i>ՇՈՒՌՆՈՒՆ</i>

	➤ Բազմաբնակարան շենքի վերակառուցում, վերաբնակեցման ծրագրերի իրականացում ➤ Մանկապարտեզի հիմնում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ Տնտեսությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում ➤ Խաղահրապարակի կառուցում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	<i>ՔԱՐԱՀՈՒՆՁ</i>
	➤ Կոյուղագծերի կառուցում և վերակառուցում ➤ Դաշտամիջյան ճանապարհների բարելավում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Խաղահրապարակի կառուցում ➤ Բնակավայրի պատմական հավածի վերականգնում ➤ Տնտեսությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	<i>ԲԱՐՁՐԱՎԱՆ</i>
	➤ Մանկապարտեզի խոհանոցի, սանհանգույցի կապիտալ նորոգում ➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում, գաստրո տարածքի

	հիմնում ➤ Տնտեսությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում
	ՀԱՐԹԱՇԵՆ
	➤ Նոր մակապարտեզի բացում ➤ Ոռոգման ջրագծերի վերակառուցում ➤ Ջերմոցային տնտեսության հիմնում ➤ Զբոսայգու, հանգստի գոտու հիմնում ➤ Գիշերային լուսավորության արդիականացում, ԼԵԴ լուսատուների տեղադրում ➤ Արվեստների կենտրոնի հիմնում ➤ Արևային պանելների տեղադրում՝ համայնքային ենթակայության շենքերում ➤ Ճանապարհային ցանցի բարելավում ➤ Անվտանգային, ռազմավարական ծրագրերի իրականացում

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի 2022թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2022-2027թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը							
N	Մուտքերի անվանումը	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.
		փաստ.	նախատ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	1,382,570,063	1,186,011,000	1,308,256,000	1,558,691,000	1,838,891,48	2,138,994,00
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	1,382,507,063,10	1,186,011,000	1,308,256,000	1,558,631,000	1,838,891,41	2,138,994,000
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ	192,668,961,10	140,190,000	152,659,250	166,881,098	183,033,477	201,439,368

	ՏՈՒՐՔԵՐ						
	Գույքային հարկեր անշարժ գույքից	42,047,199,10	30,000,000	31,100,000	32,241,200	33,425,246	34,653,854
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	11,882,572	0	8,610,000	9,040,500	9,492,525	9,967,151
	Հողի հարկ	6,963,543	0	23,690,000	24,400,700	25,132,721	25,886,703
	Գույքային հարկեր այլ գույքից	128,268,669	92,300,000	101,105,000	111,230,750	122,875,363	136,266,667
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	128,268,669	92,300,000	101,105,000	111,230,750	122,875,363	136,266,667
	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	12,141,598	11,090,000	13,054,250	15,313,138	17,910,858	20,898,237
2 3 7	Տեղական տուրքեր	12,141,598	11,090,000	13,054,250	15,313,138	17,910,858	20,898,297

	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	10,211,500	6,800,000	7,400,000	8,060,000	8,786,000	9,584,600
	Պետական տուրքեր	10,211,500	6,800,000	7,400,000	8,060,000	8,786,000	9,584,600
	Այլ հարկային եկամուտներ	0	0	0	0	0	0
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	0	0	0	0	0	0
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության	0	0	0	0	0	0

	խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ						
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	1,044,747	937,972,000	937,972,000	937,972,000	932,972,000	932,972,000
	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0
	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0
	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	961,172,700	937,972,000	937,972,000	937,972,000	937,972,000	937,972,000
	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	957,249,200	929,570,400	929,570,400	929,570,400	929,570,400	929,570,400
	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	0	0	0	0	0	0
	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	3,923,500	8,401,600	8,401,600	8,401,600	8,401,600	8,401,600
	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0
	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0

	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	0	0	0	0
	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	145,090,413	107,849,000	117,624,950	237,326,995	249,045,17	261,878,983
	Տոկոսներ	0	0	0	0	0	0
	Շահաբաժիններ	0	0	0	0	0	0
	Գույքի վարձակալությունից եկամուտներ	34,039,512	19,500,000	20,325,000	21,191,250	22,100,813	23,055,853
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	6,547,868	4,500,000	4,875,000	5,286,750	5,682,186	6,116,297
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0	0	0	0	0	0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	6,386,720	5,000,000	5,275,000	5,563,750	5,866,938	6,182,289
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	21,104,924	10,000,000	10,175,000	10,358,750	10,551,688	10,754,272

Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	2,657,956	51,999,000	60,744,950	70,365,495	80,948,095	92,588,954
Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	2,657,956	1,999,000	1,999,000	1,999,000	1,999,000	1,999,000

Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների	0	50,000,000	58,745,950	68,360,495	78,949,095	90,589,954
կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր						
Վարչական գանձումներ	89,452,962	33,350,000	34,450,000	35,762,500	37,132,500	38,572,500
Տեղական վճարներ	85,113,992	30,850,000	31,950,000	33,262,600	34,462,600	35,762,600
Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	4,338,970	2,500,000	2,500,000	2,500,000	2,500,000	2,500,000
Մուտքեր տույժերից, տուգանքներից	5,800,000	3,000,000	3,080,000	3,169,000	3,252,000	3,344,850
Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի	5,800,000	3,000,000	3,000,000	3,000,000	3,000,000	3,000,000

	կողմից պատասխանատվությա ն միջոցների կիրառումից եկամուտներ						
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորություններ ի չկատարման դիմաց գանձվող տույժերից	0	0	0	0	0	0
	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0
	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	10,000,000	0	0	0	0	0
	Այլ եկամուտներ*	3,139,983	0	0	0	0	0
	Համայնքի գույքին	0	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	0	0	0	0	0	0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	3,139,983	0	0	0	0	0

Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Գորիս համայնքի զարգացման ռազմավարության իրագործման ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով առանձնացված ոլորտներով դիտարկելու պարագայում ստանում ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 14. Գորիս համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներ և դրանց պատճառները

h/h	Խնդիրներն ու զարգացման խոչընդոտները	Առաջացնող պատճառները
1.	Անվտանգություն	Հետպատերազմական իրավիճակում սահմանազատման և սահմանագծման խնդիրներ
		Օկուպացված տարածքներ Թշնամու զինված ուժերի առկայություն սուվերեն տարածքներում Մ2 մինջպետական ճանապարհի գործարկման դադարեցում
2.	Զբոսաշրջության դանդաղ զարգացում	Հետպատերազմական իրավիճակից բխող անվտանգային հարցեր
		Զբոսաշրջային ենթակառուցվածքների հանրահռչակման պասիվություն
		Սպասարկող ոլորտների (սննդի կետեր, ժամանցի վայրեր, հուշանվերների խանութներ) թերզարգացվածություն
		Ոլորտի զարգացմանն ուղղված ծառայությունների ցածր զարգացվածություն
		Գիդերի, ոլորտի մասնագետների կարիք
		Արշավախմբերի բացակայություն
		Տեղական բրենդների մշակման ռազմավարության բացակայություն
		Արհեստագործության, արհեստների պասիվ ցուցադրություն

3.	Գյուղատնտեսության զարգացում	Ժամանակակից գյուղտեխնիկայի բացակայություն Պրոֆեսիոնալ, ժամանակակից մեթոդներին և գիտիքներին տիրապետող գյուղատնտեսների սակավություն, գյուղատնտեսական գիտա-կրթական ծրագրերի սակավություն Նոր շուկաների բացահայտում, արտադրանքի առաջմղում, տեղային գյուղմթերքի բրենդինգ, ագրոբիզնեսի ժամանակակից մոտեցումների բացակայություն Մեքենատրակտորային պարկի ստեղծում Նոր սերմերի, սորտերի և տնկիների ներմուծում և տեղայնացում Մերմնաբուծության զարգացում՝ տեղային գերադասելի սորտերի գերադասելիությամբ Ոռոգման ջուր՝ ցանցեր, ջրամբար, կաթիլային ոռոգման համակարգ, ժամանակակից մեթոդների ոչ բավարար կիրառում Ջերմոցային կուլտուրաներ Հակակարկտային կայաններ, գյուղատնտեսական ապահովագրություն Կաթի մթերման և պահեստավորման կետի անհրաժեշտություն Մսի իրացման դժվարություններ Անասնախմոցների անհրաժեշտություն Սպանդանոցի կարիք
4.	Հասարակական տրանսպորտ, ճանապարհային ենթակառուցվածքների բացակայություն	Նոր երթուղիների շահագործման անհրաժեշտություն Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում Նոր տրանսպորտային միջոցներ, միկրոավտոբուսներ Ճանապարհաշինական տեխնիկա Տրանսպորտային ցանցի, շարժման համակարգի անկատարություն Կանգառների կառուցում Փողոցների անվանումներով ցուցանակների տեղադրում Փողոցների բարեկարգում Մայրերի և առուների բարեկարգում
5.	Աղքատություն և սոցիալական պաշտպանության համակարգի ոչ բավարար վիճակ	Աղքատության բարձր մակարդակ Սոցիալական աջակցության անկատար համակարգ Թույլ համագործակցության համայնքի շահագրգիռ կողմերի միջև Տեղական, փոքր ընտանեկան բիզնես գաղափարների

		սակավություն, խրախուսման կարիք
		Մոցիալական ծառայությունների սակավություն և ցածր որակ
6.	Երտասարդության պասիվություն և գործազրկության բարձր մակարդակ	Երիտասարդները պասիվ են և չեն մասնակցում համայնքի կառավարման գործընթացներին
		Երիտասարդները պասիվ են մրցակցային ծրագրեր, գաղափարներ առաջ քաշելու հարցում
		Բարձր է երիտասարդների գործազրկության մակարդակը, աշխատաշուկայում մրցունակ չեն. Թույլ է մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները: Ոչ բավարար են զարգացված միջին մասնագիտական կրթության ուղղությունները, դրանք ապահովող ենթակառուցվածքները
		Երիտասարդները քիչ են օգտագործում հնարավորությունները ժամանցի, հանգստի և ինքնակազմակերպման համար
7.	Համայնքի բնակչության պասիվություն և հասարակական կառույցների ներգրավվածության ոչ բավարար մակարդակը	Համայնքի բնակիչները պասիվ են և չեն մասնակցում համայնքային աշխատանքներին
		Համայնքի բնակիչները նախաձեռնություններով հանդես չեն գալիս
		ՀԿ-ների նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների արդյունավետ ուղղորդումը համայնքային զարգացման գործընթացներում

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
- Մեծ թվով բնական ու տեխնադին հուշարձաններ համայնքի սահմաններում և հարակից շրջաններում - Հարուստ նյութական և ոչ նյութական ժառանգություն - Ռազմավարական աշխարհագրական դիրք՝ որպես տրանսպորտային և տնտեսական հանգույց - Բարենպաստ կլիմայական պայմաններ - Բազմաթիվ հյուրանոցների ու հյուրատների առկայություն	- Սահմանամերձ համայնք - անվտանգության խնդիրներ - Տարածքների կորուստներ - Թույլ զարգացած ենթակառուցվածքներ - Զբոսաշրջությանը սպասարկող ծառայությունների և ենթակառուցվածքների պակաս - Մեփական համայնքի և պատմամշակութային կոթողների ճանաչելիության և արժևորման ցածր մակարդակ՝ բնակչության շրջանում

• Գոյություն ունեցող տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ցանցի առկայություն • Բազմաթիվ կրթական, առողջապահական, մշակութային հաստատությունների առկայություն • Տեղեկատվական տեխնոլոգիաներ, առկա ու նախատեսվող ինժեներական լաբորատորիաներ • Գյուղատնտեսության զարգացման նպաստավոր պայմաններ՝ բերի հողեր, հասանելի մեծաքանակ հողային ռեսուրսներ, արոտավայրեր խոտհարքներ • Քաղաքին կից անտառային ծածկույթի և տնամերձ այգիների առկայություն	• Բրենդինգի և գովազդի անհրաժեշտություն • Աղբահանություն • Մաքրման կայանի բացակայություն • Հանրային տարածքների ցածր որակ • Տեղական արտադրությունների և դրանց բրենդինգի պակաս • Համայնքի բնակավայրերում ենթակառուցվածքների թերզարգացվածություն • Ժամանակակից գյուղատնտեսության մոտեցումների ոչ բավարար կիրառում • Հնացած գյուղտեխնիկա, տրանսպորտային պարկ • Ջերմոցային կուլտուրաների և ոռոգման համակարգերի անբավարար զարգացվածություն
<i>Հնարավորություններ</i>	<i>Մպատնալիքներ (վտանգներ)</i>
• Տարածաշրջանային ու միջազգային զբոսաշրջային կենտրոն դառնալու ներուժ • Տարածաշրջանային տնտեսական, առողջապահական և արտադրական կենտրոն դառնալու նախադրյալներ և ներուժ • Հանրային տարածքների բարեկարգում, հանգստի գոտիների կառուցում, անտառային շերտի արդյունավետ, բնապահպանական ստանդարտներին համապատասխան օգտագործում • Էկո-արտադրանքի խթանում՝ հատկապես գյուղական բնակավայրերում օրգանական գյուղմթերքի և ժամանակակից ագրոֆիզնեսի զարգացում • Բազմաթիվ միջազգային ու տարածաշրջանային ծրագրերում	• Պատերազմի վերսկսման հավանականություն • Սահմանամերձ համայնք • Աղբահանություն, աղբի տեսակավորման/վերամշակման բացակայություն • Վարարակն գետի անմխիթար սանիտարական վիճակ՝ գյուղական համայնքներից կոյուղաջրերի և ապօրինի աղբաթափմամբ պայմանավորված բնակչության նվազում (, արտագաղթ, միգրացիա) • Գեոդինամիկ գործընթացների ակտիվացում • Ստորգետնյա ջրերի աղտոտվածություն, որակական փոփոխություն • Համայնքի՝ գլխավոր երթուղուց դուրս

ներգրավվածություն • Քույր քաղաքների հետ համագործակցությունը, • Գյուղական բնակավայրերի հարուստ պոտենցիալի օգտագործում • Զբոսաշրջային ծրագրերի մշակում • Տեղական և պետական մասշտաբների միջոցառումների կազմակերպում՝ «Սպարապետի օր», «Սյունյաց ավանդույթներ», «Գորիսյան օրեր», «Թթի» և այլ փառատոնների օրինակով • Զարգացման ճկուն հնարավորություններ քաղաքի հատակագծային կառուցվածքում • Համայնքում գործող խոշոր արդյունաբերական ու ֆինանսական ձեռնարկություններ, ՏՏ ոլորտի զարգացման հեռանկարներ • Էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործում • Պանրի, մեղրի, լոբու, թթի օղու, ավելուկի տեղական գյուղմթերքի բարի համբավ՝ հատկապես գյուղական բնակավայրերում • Ակտիվ քաղաքացիական հասարակության կառույցներ՝ շուրջ 40 հասարակական կազմակերպություններ	մղման վտանգ
---	--------------------

Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի զարգացման տեսլական

Գորիսն իր աշխարհագրական դիրքով, բնակչության, բնակլիմայական, ճարտարապետական և պատմամշակութային ուրույն առանձնահատկություններով, առկա մասնագիտական, արտադրական ռեսուրսներով ի գործու է ստանձնել տարածաշրջանային կարևորագույն և ռազմավարական հանգույցի և լոկոմոտիվի դերակատարում՝ տնտեսական, տրանսպորտային, առողջապահական, զբոսաշրջային և այլ ոլորտներում:

Մենք նպատակադրված ենք նպաստել առողջ և վստահելի ներդրումային, տնտեսական և բիզնես միջավայրի ձևավորմանը: Ակնկալում ենք փոխադարձ վստահության և արդյունավետ համագործակցության շնորհիվ բազմապատկել արդեն իսկ առկա տեղական և արտասահմանյան ներդրումների ծավալը, խրախուսել տեղական արտադրությունը, համագործակցությունը գործարար միջավայրի հետ: Զբոսաշրջության աշխուժացումը լրացուցիչ խթան է սպասարկող ենթակառուցվածքների և տեղական արտադրության զարգացմանը, ինչն ուղղակիորեն ենթադրում է նաև գյուղատնտեսության, մշակույթի, արվեստի, արհեստագործության և այլ ոլորտների առաջընթաց: Տարածքի բնակլիմայական, աշխարհագրական և այլ առանձնահատկությունները թույլ են տալիս մտածել նաև առողջապահական տուրիզմի զարգացման հնարավորությունների մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արվող ներդրումները և համագործակցությունը տեղական և արտասահմանյան ընկերությունների հետ ստեղծել են համայնքը տարածաշրջանային ՏՏ կենտրոնի վերածելու նախադրյալներ, ինչն իր հերթին կարող է նպաստել արդյունաբերության, հատկապես՝ ռազմարդյունաբերության, ռոբոտաշինության և այլ հարակից ոլորտների կտրուկ զարգացմանը: Այս ամենը ենթադրում է բնակչության համար սոցիալ-տնտեսական և կենցաղային պայմանների կտրուկ բարելավում և ապագայում բնակչության թվի հաստատուն աճ:

Համայնքի զարգացման ծրագրի կատարման արդյունքում ակնկալվում են հետևյալ փոփոխությունները.

- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ 27,4 %-ով
- Համայնքի բնակչության թվաքանակի աճ՝ 5-6 %-ով
- Բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ 10-15%-ով
- Գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման աճ՝ 10-20%
- Համայնքում առողջ կենսակերպով ապրող բնակիչների թվաքանակի աճ՝ 15-20%
- Համայնքի բնակչության և համայնքում գործող հասարակական կառույցների համայնքային աշխատանքներում ներգրավվածության աճ՝ 25-30%
- Համայնքի արտադրական և էներգետիկ պոտենցիալի աճ՝ 5-10%
- Երիտասարդության զբաղվածության, ժամանցի և հանգստի կազմակերպման հնարավորությունների աճ՝ 25-30%

Զարգացման տեսլականին հասնելու հեռահար նպատակը, անմիջական նպատակները, միջանկյալ արդյունքները և նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ և ներկայացված է Աղյուսակ 15.-ում:

Աղյուսակ 15. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները

h / h	Խնդիրները	Միջանկյալ արդյունքները	Անհրաժեշտ գործողությունները	Պահանջվող ռեսուրսները
1	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	Բարենպաստ բիզնես միջավայրի ստեղծում	✓ Ենթակառուցվածքների որակի և հուսալիության բարելավման ճանապարհով ներդրումների ներգրավում ✓ Տեղական տուրքերից ազատում և արտոնությունների տրամադրում՝ նոր աշխատատեղերի ստեղծման պարագայում ✓ Տեղական տնայնագործական արտադրողների արտադրանքի ցուցադրություն-վաճառք՝ փառատոնների, տարբեր էքսպոների ժամանակ ✓ Գյուղատնտեսական ապրանքների բրենդավորում, նոր շուկաների հայթայթում ✓ Արտադրված է Գործիսում ապրանքանիշի գովազդում ✓ Բիզնես ֆորումների և ցուցահանդես վաճառքների կազմակերպում՝ միջազգային ներգրավմամբ	Համագործակց քաղաքների ու երկրների հետ կապեր, փորձառու մարքեթոլոգներ, դրամաշնորհներ, տեղական և արտասահմանյան ներդրողներ, այլ՝ օրենքով չարգելվող միջոցներ
		Համայնքի տարածքում գործող կազմակերպությունների թվի աճ	✓ Ագրոբիզնեսի զարգացում հատկապես գյուղական բնակավայրերում, օրգանական գյուղատնտեսության և առանձին ապրանքատեսակների՝ պանրի, լոբու, ավելուկի, սարիթեյի, ծնեփակի, թթի օդու, մեղրի և այլ արտադրություններին խթանում ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների և արտադրությունների խրախուսում՝ նոր մասնաճյուղերի բացման հեռանկարներով ✓ Բոլոր ծրագրերում տեղական ներուժի ներգրավում (օր.՝ շինարարություն) ✓ Մարքեթինգ և շուկայի ուսումնասիրություն, խորհրդատվական աջակցություն սկսնակ ձեռներեցներին ✓ Սպառման շուկաների հայտնաբերում, արտահանման աջակցություն, միջազգային ցուցահանդես վաճառքներին մասնակցության խրախուսում ✓ Տեղական արտադրանքի բրենդինգ և գովազդ	

2	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն	Շենքային պայմանների բարելավում	✓ Նախակթարանների մասնակի կամ ամբողջական նորոգում ✓ Ջեռուցման, լուսավորության և սանիտարահիգիենիկ պայմանների մշտական վերահսկողություն	Մեթոդական, մանկավարժական նյութեր, գրենական պիտույքներ, վերապատրաստողներ, գրագետ կադրային քաղաքականություն
		Մանկի որակի բարձրացում	✓ Մանկի որակի պարբերաբար ստուգում, բարելավում, կալորիականության ապահովում ✓ Հանձնախմբերում ծնողների ներգրավում, անակնկալ այցեր	
		Կրթության որակի բարձրացում, աշխատողների մոտիվացում	✓ Դասալսումներ, կրթության որակի նկատմամբ անընդհատ հսկողություն, մասնագիտական վերապատրաստումներ ✓ Աշխատողների միջին աշխատավարձի հնարավոր բարձրացում, մոտիվացիոն մեխանիզմներ ✓ Լավագույն կադրերի և նախաձեռնությունների խրախուսում ✓ Դրական, օրինակելի մոդելների հանրահռչակում	
3	Ակտիվ մշակութային ու մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդների ներգրավմամբ	Համայնքում գործող մշակութային խմբակների թվի աճ	✓ Մշակութային խմբակներ հաճախող երեխաների թվի ավելացում, ✓ Տաղանդավոր երեխաների հայտնաբերում և խրախուսում՝ վարձավճարներից ազատման և այլ մեխանիզմներով ✓ Մշակութային որոլորտների, արհեստագործական խմբակների խրախուսում և զարգացում ✓ Ազգային երգի, պարի համույթների տարածում, ազգային խաղերի, տեղական մշակույթի խրախուսում և հանրահռչակում	Մշակութաբաններ, արվեստագետներ, մարմնակրթական և ռազմամարզական ոլորտի մասնագետներ, մարզագույք, տեղեկատվության միջոցներ մամուլ, համացանց, տպագրվող նյութեր, անհատական և օրենքով չարգելվող միջոցների ներգրավում
		Մարզական միջոցառումների թվի աճ	✓ Մրցույթի մասին տեղեկատվության տարածում, մարզական ընտանիքների հայտնաբերում ✓ Դրական օրինակների խրախուսում, պահպանում, ճիշտ մոդելների ձևավորում՝ գրագետ իրազեկման և հանրահռչակման ճանապարհով ✓ ՊԱՊ («պատրաստ եմ աշխատանքի և պաշտպանության») համակարգի խրախուսում և տարածում ✓ Տաղանդավոր և հեռանկարային մարզիկների խրախուսում և հանրահռչակում	

		Համայնքից դուրս կազմակերպվող մշակութային միջոցառումներին մասնակցություն	✓ Հայտարարվող մրցույթների մասին իրազեկման բարձրացում ✓ Համայնքային բյուջեից ֆինանսավորում ✓ Տեղական մշակութային ժառանգության հանրահռչակման խրախուսում ✓ Լավագույն և օրինակելի կերպարների ձևավորում	
4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հզորացում	Խնամատար ընտանիք համակարգի ներդրում և աջակցություն	✓ Խնամակալության հանձնաժողովի և ՍԱՏԳ-ի միջև համագործակցություն ✓ Ընտանիքների խորհրդատվական աջակցություն ✓ Տեղական սոցիալական համագործակցության ցանցի ստեղծում ✓ Տեղական սոցիալական ծրագրերի նախագծում և իրականացում ✓ Օրինակելի ընտանեկան և սոցիալական մոդելների հանրահռչակում և խրախուսում՝ հոգեբանական նույնականացման և վարքագծային մոդելի ձևավորման սկզբունքով	Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք
		Քաղաքացիների սոցիալական աջակցություն	✓ Կենսական նշանակության խնդիրների առաջնահերթության կարգով լուծումների տրամադրման ռազմավարության մշակում ✓ Քաղաքացիների սոցիալական աջակցության ժամանակակից և բազիսային մեթոդների մշակում	
		Ծերերի, անապահովների, հաշմանդամների պաշտպանություն	✓ Համայնքում գործող ցերեկային խնամքի կենտրոնին, Վետերանների տանը, Բարեգործական ճաշարանին աջակցության մեծացում, ✓ Տարեցների, հաշմանդամների ինտեգրում հասարակական կյանքին՝ սոցիալական, մշակութային և այլ ծրագրերի միջոցով ✓ Սերունդների միջև կապի ամրապնդմանը միտված համալիր միջոցառումներ	

5	Ֆիզիկական և կուլտուրայի և առողջապարհականության խրախուսում	Նոր մարզածների զարգացման համար հնարավորությունների ստեղծում	✓ Մարզադպրոցի համար գույքի ձեռքբերում ✓ Ֆուտբոլի դաշտի բարեկարգում ✓ Նախակրթարանների սաների, կրթական և այլ հաստատությունների անդամների ֆիզիկական պատրաստվածության հաճախակի գնահատում ✓ ՊԱՊ համակարգի խրախուսում, համայնքի ենթակայության տակ գտնվող հաստատություններում մարզական միջոցառումների պարբերաբար կազմակերպում ✓ Խոշոր մասշտաբի սպորտային միջոցառումների, մարմնամարզական կրթությանը վերաբերվող գիտական քննարկումների պարբերաբար կազմակերպում ✓ Մարտական նշանակության սպորտաձևերի առանձնահատուկ խրախուսում	Հովանավորներ, բարեգործներ, մարզագույք
		Բնակավայրերում մարզական կյանքի ակտիվացում	✓ Ֆուտբոլի, շախմատի, հենձանվասպորտի և այլ մարզական միջոցառումների և առաջնությունների կազմակերպում բնակավայրերում ✓ Բակային խաղահրապարակների բարեկարգում և նորերի կառուցում ✓ Մարաթոնների, կիսամարաթոնների կազմակերպում ✓ Սեզոնային բակային և համայնքային ճամբարների քաջալերում ✓ Միջհամայնքային սպորտլանդիաների ինստիտուտի զարգացում	
6	Բնակարանային պայմանների բարելավում	Բնակելի շենքերի բարեկարգում	Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում: Բազմաբնակարան շենքերում տանիքների մասսարդային հարկերի վերակառուցում Ազդեստային ծածկերից ձերբագատման քաղաքականություն, արևային պանելներին նախապատվության տրամադրման ռազմավարություն Շենքերի մուտքերի բարեկարգում	Վարկային միջոցներ, բնակիչների անձնական ներդրումներ, միջազգային կազմակերպությունների ֆինանսներ

		Բնակելի շենքերի բակերի բարեկարգում	Բազմաբնակարան շենքերի բակերի կանաչապատում ու բարեկարգում Տնամերձ այգիների մշակույթի խրախուսում	
7	<i>Համայնքի բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ ենթակառուցվածքներ</i>	Քաղաքաշինական կանոնակարգման արդիականացում	✓ Համայնքի քաղաքաշինական կանոնակարգի վերանայում՝ քաղաքի պատմամշակութային դիմագծի պահպանման առաջնահերթությամբ ✓ Համայնքի գլխավոր հատակագծի լրամշակված տարբերակի ներդրում ✓ Նոր գերեզմանատան ստեղծում, կանոնակարգված սպասարկում ✓ Համայնքում կանաչ տարածքների ավելացում ✓ Տնամերձ այգիների և այգի-քաղաքի մշակույթի խրախուսում	Ճարտարապետներ, ԶԼՄ-ներ, Մասնագիտական խորհրդատվություն, աղբատար, աղբահավաք եքենաներ, աղբամաններ, սանիտարական պարագաներ, շինարարներ
		Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման պատշաճ կազմակերպում	✓ Համայնքի գլխավոր աղբավայրի ցանկապատում, նոր, ժամանակակից չափորոշիչներով աղբավայրի հիմնում և շահագործում ✓ Գյուղական բնակավայրերում աղբահանության կանոնակարգում ✓ Աղբի տեսակավորման մշակույթի ձևավորում ✓ Աղբի վերամշակման հնարավորությունների ներդրում ✓ Նոր աղբատար մեքենայի շահագործում ✓ Նոր աղբամանների տեղադրում	
		Համայնքի բոլոր բնակավայրերի ջրամատակարարման բարելավում	✓ Կոյուղագծի նորոգում՝ բնապահպանական ժամանակակից նորմերի պահպանմամբ ✓ Վթարված հատվածների վերականգնում ✓ Ջրամատակարարման ցանցի վերակառուցում ✓ Ագրեստային խողովակներից ձերբագատում	

8	Համայնքի տրանսպորտային սպասարկում	Գյուղական բնակավայրերի տրանսպորտային սպասարկման բարելավում	✓ Նոր միկրոավտոբուսների ձեռքբերում և նոր երթուղու շահագործում ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում ✓ Էքստրեմալ պայմանների համար նախատեսված այլընտրանքային ճանապարհների նախագծում ✓ Քաղաքաշինական տեխնիկայի ձեռքբերում	Մասնագիտական խորհրդատվություն, միկրոավտոբուսներ, ճանապարհաշինական տեխնիկա, շինարարներ, ճանապարհային
		Համայնքային ենթակայության և ճանապարհների բարեկարգում և ենթակառուցվածքների ստեղծում	✓ Ճանապարհային նշանների տեղադրում ✓ Ավտոբուսային կանգառների կառուցում և կահավորում ✓ Ճանապարհների նշագծում ✓ Էքստրեմալ պայմանների համար այլընտրանքային երթուղիների մշակում	և կահավորանքի տարրեր
9	Աղետների ռիսկերի նվազեցում և քաղաքացիական պաշտպանության	Վարարակն գետի մաքրում և հեղեղատարների նորոգում	✓ Վարարակն գետի հունի մաքրում ✓ Հեղեղատարների վերականգնում ✓ Եզրառումների նորոգում ✓ Գետի վնասված հենապատերի վերակառուցում ✓ Գետի վրայով անցնող կամուրջների վերականգնում ✓ Գետամերձ հատվածների շահագործման ռազմավարության մշակում	Մաքրող տեխնիկա և աշխատուժ, իրազեկման նյութեր, ԱԻՆ աշխատակիցներ, նորագույն տեխնոլոգիաներ
		Քաղաքացիական պաշտպանության իրականացում	✓ Քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումների իրականացում ✓ ԱԻՆ-դպրոցներ-համայնքապետարան կապի զարգացում՝ դասընթացներ, իրազեկման միջոցառումներ ✓ Ապաստարանների հիմնում, ✓ Էքստրեմալ պայմաններում էվակուացիոն ճանապարհների, միջոցառումների և ռեզերվների համակարգում, մեթոդոլոգիական և ռազմավարական շարունակական արդիականացում	

1 0	Գյուղատնտեսության զարգացման խթանում	Անասնապահության զարգացում և արտոտավայրերի կառավարում	✓ Մակավաշուր արտոտավայրերում անասնախմոցների տեղադրում ✓ Արտոտավայրերի համակարգված շահագործման ռազմավարության մշակում և ներդրում ✓ Տեղական ռազմավարական նշանակության անասնապահական սորտերի ստացում, բազմացում և տարածում ✓ Նորագույն տեխնալոգիաներով հագեցած սպանդանոցի կառուցում ✓ Մսամթերքի, կաշվի, մորթու վերամշակման հեռանկարների ուսումնասիրություն, արտադրամասերի հիմնում ✓ Կաթի վերամշակման, կաթի փոշու ստացման և պահեստավորման արտադրամասի կառուցում ✓ Գյուղատնտեսություն-Բիզնես կապի աշխուժացում	Գյուղտեխնիկա, գիտակրթական նյութեր, գրագետ կադրային քաղաքականություն, գյուղատնտեսներ, վարկային և այլ օրենքով չարգելվող միջոցներ
--------	-------------------------------------	--	--	--

		Համայնքում սերմնաբուծության զարգացում և նոր տեխնալոգիաների ներդրում	✓ Գյուղատնտեսական կոոպերատիվների և կոլեկտիվ տնտեսությունների մշակույթի խրախուսում և զարգացում ✓ Վարկային և այլ օրենքով չարգելվող միջոցներով սերմերի ձեռքբերում, տեղայնացում և արտոնյալ պայմաններով գյուղացիներին տրամադրում ✓ Տեղական ռազմավարական նշանակության սերմերի, մշակաբույսերի ստացում, բազմացում և տարածում ✓ Գիտակրթական ու տեղեկատվական դասընթացների և միջոցառումների կազմակերպում ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում և արտոնյալ պայմաններով գյուղացիներին տրամադրում ✓ Ջերմոցային կուլտուրաների խրախուսում ✓ Հակակարկտային համալիր միջոցառումներ և գյուղատնտեսության ապահովագրության խրախուսում ✓ Ժամանակակից ոռոգման համակարգերի, օրգանական գյուղատնտեսության աջակցություն ✓ Գյուղատնտեսություն-Բիզնես կապի աշխուժացում	
1 2	Ձրոսաշրջության զարգացման խթանում»	Ձրոսաշրջության ոլորտից եկամուտ ստացող բնակիչների թվի աճ՝ հատկապես գյուղական բնակավայրերում	✓ Հյուրընկալող ընտանիքների ցուցակագրում, կարողությունների բարելավում ✓ Ագրոտուրիզմի և գաստրոնոմիկ տուրիզմի զարգացում՝ օգտագործելով հատկապես տեղական ավանդույթները պահպանող գյուղական բնակավայրերում առկա ներուժը ✓ Գործիք քաղաքի և գյուղական բնակավայրերի միջև զրոսաշրջային ցանցի ստեղծում, ✓ Ենթակառուցվածքների բարելավում ✓ Համայնքում զրոսաշրջիկին պահելու օրերի թվի ավելացում՝ նոր զրոսաշրջային հետաքրքրությունների ստեղծման միջոցով	Հյուրանոցներ, հյուրատներ, հյուրընկալող ընտանիքներ, ցուցանակներ, գյուղատնտեսներ, թանգարաններ, տպագիր նյութեր, մասնագետներ՝ գիդեր, քարտեզագրողներ, սպասարկող անձնակազմ, համայնքից, բարերարների

		Համայնքի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի բրենդի ձևավորում, իրազեկման բարձրացում	✓ Պատմամշակութային հուշարձանների, զբոսաշրջությանը սպասարկող ենթակառուցվածքների ցուցակագրում և քարտեզագրում, նոր երթուղիների հիմնում ✓ Պատմամշակութային հուշարձանների հիմնանորոգում ✓ Զբոսաշրջային ենթակառուցվածքների և սպասարկող կառույցների մշտական կատարելագործում ✓ Տեղեկատվական ցուցանակների տեղադրում ✓ Քաղաքի բրենդի ձևավորում և հանրահռչակում ✓ Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կարողությունների զարգացում	ց և այլ օրենքով չարգելվող ֆոնդերից տրամադրվող միջոցներ
1 1	<i>Շրջակա միջավայրի պահպանու թյուն</i>	Համայնքի բարեկարգում և կանաչապատ ում	✓ Շաբաթօրյակների, ծառատունկերի կազմակերպում ✓ Զբոսայգիների բարեկարգում ✓ Տնամերձ այգիների ենթամշակույթի խրախուսում ✓ Բնակչության տեղեկացվածության, գիտակրթական մակարդակի շարունակական բարելավում	Վարկային միջոցներ, լուսավորությ ան համակարգեր, ջերմոցային կուլտուրաներ , տնկիներ, ծաղիկներ, այլ օրենքով չարգելվող միջոցներ
1 3		Լուսավորությ ան համակարգերի արդիականաց ում	✓ Գյուղական բնակավայրերի ապահովում գիշերային լուսավորությամբ ✓ Առկա լուսավորության համակարգերի փոխարինում էներգախնայողներով ✓ «Կանաչ» էներգիայի խրախուսում	

	Համայնքում երիտասարդների խնդիրների լուծում	SS ոլորտի զարգացում	✓ Տեղեկատվական ժամանակակից գիտակրթական կենտրոնի հիմնում, «Արմաթ» լաբորատորիաների ցանցի զարգացում ✓ Գյուղական բնակավայրերի հանրակրթական հաստատություններում ինժեներական և գիտական լաբորատորիաների ստեղծում ✓ Ռոբոտաշինության, ինժեներական մասնագիտությունների խրախուսում	Մասնավոր ոլորտի ֆինանսավորում, ներդրողներ, դպրոցներ, ԲՈՒՀ-եր, ակտիվ խմբեր, գործատուներ, սարքավորումներ՝ համակարգիչներ, եռաչափ տպիչներ, SS ոլորտի փորձագետներ
		Երիտասարդական նախաձեռնությունների ակտիվացում	✓ Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի ստեղծում ✓ Սոցիալական գործընկերության մոդելի ստեղծում՝ ուղղված երիտասարդություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը և կարիերայի ուղղորդմանը ✓ Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում ✓ Դպրոց-համալսարան-ՄԿՈՒ հաստատություններ-բիզնես կապի ստեղծում ✓ ԳՊՀ-ում, ՄԿՈՒ հաստատություններում SS ոլորտի նպատակային տեղերի բացում	

Սահմանվել են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները և դրանց թիրախային արժեքները, այսինքն համայնքի պատկերը հինգ տարի հետո, որոնք ներկայացված են Հավելված 3.-ում Մոնիթորինգի անձնագրի տեսքով:

Գորիս համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը

1. Գորիս համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները

Գորիսը խոշորացված համայնք է, որտեղ գործում են բնակչության սոցիալական պաշտպանության համալիր ծառայություններ՝ ներառյալ **կրթություն, զբաղվածություն, առողջապահություն**: Համայնքի բոլոր բնակավայրերում գործում են երեխաների խնամքի հասանելի ծառայություններ, գործում է վերականգնողական կենտրոն:

Համայնքում առկա է տարեցների խնամքի և ժամանցի կենտրոն, որը գործում է շուրջօրյա: Համայնքն ունի նաև Ընտանիքների աջակցության և զարգացման շուրջօրյա կենտրոն:

Համայնքի բոլոր բնակավայրերի հանրային վայրերը և հաստատությունները հարմարեցված են հատուկ կարիքներ ունեցող մարդկանց համար: Համայնքում առկա է ներառական միջավայր:

Համայնքում գործում է փոքր ու միջին բիզնեսի աջակցման կենտրոն, որը մատուցում է մատչելի ծառայություններ:

Կրթական համակարգը բավարարում է բոլոր տարիքային խմբերի կարիքները, նպաստում է սովորողների զարգացմանը, այն որակյալ և հասանելի է: Համայնքն ունի զարգացած տնտեսական ենթակառուցվածքներ:

Համայնքում առկա են հասանելի և որակյալ առողջապահական ծառայություններ:

Համայնքի սոցիալական ենթակառուցվածքները ապակենտրոնացված են և հասանելի են համայնքի բոլոր բնակիչներին:

Համայնքի սոցիալական կառույցները սերտ համագործակցում են Արցախի և ՀՀ այլ մարզերի համապատասխան կառույցների հետ: Համայնքը սոցիալական ոլորտի փորձով ներկայանում է ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային հարթակներում:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները՝

- Նպաստել Գորիս համայնքի խոցելի ընտանիքներում բռնությունների, ամուսնալուծությունների կանխարգելմանը՝ զարգացնելով ընտանիքներում կենցաղավարման, ծնողավարման և տնտեսավարման հմտությունները:

- Նպաստել Գորիս համայնքի երեխաների, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը՝ աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրման, վերամասնագիտացման և ուղղորդման միջոցով:
- Աջակցել Գորիս համայնքի հատուկ կարիք ունեցող երեխաների առողջապահական, սոցիալ- հոգեբանական, ֆիզիկական կարիքների բավարարմանը և նպաստել ներառական միջավայրի ստեղծմանը:
- Նպաստել Գորիս համայնքի տարեցների խնամքի, ժամանցի ապահովմանը և ակտիվ կենսակերպի կազմակերպմանը՝ երաշխավորելով արժանապատիվ և երջանիկ ծերություն:

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը, նպատակները և արդյունքները՝ անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 15.-ում:

Աղյուսակ 15. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

<i>h/h</i>	<i>Խնդիրներ ը</i>	<i>Միջանկյալ արդյունքները</i>	<i>Անհրաժեշտ գործողությունները</i>	<i>Պահանջվող ռեսուրսները</i>
4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	Ընտանիքների աջակցման և զարգացման կենտրոն	✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով ✓ Մասնագետների ներգրավում և վերապատրաստումների իրականացում ✓ Շահառուների իրազեկում կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մասին ✓ Ընտանիքների խորհրդատվական աջակցություն	Կամավորներ, համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք

		Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն	✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով ✓ Համայնքում աշխատաշուկայի վերախնդրերի ռեսուրսների իրականացում ✓ Շահառուների իրազեկում և վերապատրաստումների իրականացում ✓ Համագործակցություն համայնքում գործող կազմակերպությունների հետ՝ ներառյալ համայնքային, մարզային և հանրապետական կառույցները	
		Հատուկ կարիքներ ունեցող երեխաների վերականգնողական ծառայություններ	✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով ✓ Մասնագետների ներգրավում և վերապատրաստումների իրականացում ✓ Շահառուների իրազեկում կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մասին	

		Տարեցների ժամանցի և խնամքի ծառայություններ	✓ Համայնքում գործող ցերեկային խնամքի կենտրոնին, Վետերանների տանը, Բարեգործական ճաշարանին աջակցության մեծացում, ✓ Տարեցների, հաշմանդամների ինտեգրում հասարակական կյանքին՝ սոցիալական, մշակութային և այլ ծրագրերի միջոցով ✓ Սերունդների միջև կապի ամրապնդմանը միտված համալիր միջոցառումներ	
--	--	---	--	--

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1.
«Ընտանիքի աջակցման և զարգացման կենտրոնի հիմնում»
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել Գորիս համայնքի խոցելի ընտանիքներում բռնությունների, ամուսնալուծությունների կանխարգելմանը՝ զարգացնելով ընտանիքներում կենցաղավարման, ծնողավարման և տնտեսավարման հմտությունները:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		50	120	130	140	150	160
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	2	2	2	2
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	3	4	5	5	5
	3. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից						
	Կենտրոնի մասին տեղեկացված բնակիչներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027

		-	1000	2000	4000	8000	10000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն 1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում 1.3. Գույքի ձեռք բերում և տեղադրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Մատուցվող ծառայությունների փաթեթի մշակում և ծառայությունների ցանկի հստակեցում 1.2. Մասնագետների ներգրավում և վերապատրաստում 1.3. Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում 3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 3.1 Իրազեկման արշավների կազմակերպում 3.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում						
Ծրագրի բյուջեն	25 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, սոցիալական ծառայության մասնագետներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակչության շրջանում ընտանեկան խնդիրների մասին չբարձրաձայնելը:						
Ծրագրի հիմնական շահառուները	Խոցելի ընտանիքներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027						

Ծրագրի համառոտ նկարագրություն	Վիճակագրությունը ցույց է տալիս, որ սոցիալապես խոցելի ընտանիքների անդամները, հատկապես երեխաները, ցուցաբերում են շեղվող վարք: Ընտանիքների ծնողավարման, կենցաղավարման, տնտեսավարման հմտությունների պակասը հանգեցնում է ընտանիքների սոցիալ-տնտեսական կարգավիճակի վատթարացմանը, ինչպես նաև անդրադառնում է երեխաների հոգեբանական, առողջական, կրթական, վարքային խնդիրներին՝ մեծացնելով ընտանեկան բռնությունների ռիսկը: Արդյունքում ունենում ենք բռնությունների, ամուսնալուծությունների թվի ավելացում և երեխաների խնամակալության կազմակերպման հարցեր: Այս հանգամանքները հանգեցնում են ոչ ճիշտ ընտանիքի պլանավորմանը և վտանգում են ընտանիքի ինստիտուտի կայունությունը:
-------------------------------	---

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2.
«Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել Գորիս համայնքի երեխաների, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը՝ աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրման, վերամասնագիտացման և ուղղորդման միջոցով:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		60	120	240	480	960	1200
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027

		1	2	2	2	2	2
	2. Գործիսի աշխատաշուկայի իրականացված վերլուծություն						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		3	5	7	8	10	10
	3. Համայնքում գործող կառույցների հետ արդյունավետ համագործակցություն						
	Համագործակցող կազմակերպությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		3	5	7	9	11	13
	Ծրագրի հիմնական գործողությունները						

- 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
- 1.1. Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն
- 1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում
- 1.3. Գույքի ձեռք բերում և տեղադրում
- 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
- 2.1 Համայնքում թափուր աշխատատեղերի քարտեզագրում
- 2.2 Թափուր աշխատատեղերը համալրելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների վերլուծություն
- 2.3 Համայնքում գործ փնտրողների գիտելիքների և հմտությունների համադրում աշխատաշուկայում պահանջվող գիտելիքների և հմտությունների հետ
- 2.4 Վերլուծության հիման վրա հաշվետվությունների կազմում և հրապարակում
- 3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ

	3.1 Համայնքում գործող կառույցների հետ համագործակցության հուշագրերի ստորագրում 3.2 Համագործակցող կազմակերպությունների հետ թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների վերաբերյալ տեղեկատվության պարբերական փոխանակում
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքում տնտեսական ակտիվության նվազում, տնտեսական ճգնաժամ
Ծրագրի հիմնական շահառուները	Երիտասարդներ, գործազուրկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում դեռահասներն ու պատանիները չունեն ներկայիս աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ պատկերացումներ, մասնագիտության ընտրության հարցում նրանց ուղղորդում են հիմնականում ծնողները: Գործիսի տարածաշրջանում ոչ պաշտոնական տվյալներով աշխատանք փնտրողների թիվը 1005 է, որից 820-ը ունեն գործազրկության կարգավիճակ: Աշխատանք փնտրողներից 700-ը կանայք են, 200-ը՝ զբաղված աշխատանք փնտրող: Գործիսում գործում է 2 միջին մասնագիտական քոլեջ, 1 բուհ, 14 դպրոց: Դպրոցներում, կրթական հաստատություններում երեխաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ չեն իրականացվում, չնայած ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսումնական ծրագրի՝ դպրոցներում կամավոր սկզբունքով պետք է իրականացվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ/աշխատանքներ երեխաների հետ: Սակայն դպրոցներում աշակերտների, ուսուցիչների, ծնողների շրջանում

	կատարված հարցումները փաստում են, որ այս աշխատանքները չեն իրականացվում, կամ որոշ դպրոցներում թողնված է դասղեկների բարի կամքին: Համայնքում Միասնական սոցիալական ծառայության/ՄՄԾ-ի զբաղվածության տարածքային բաժնի կողմից պարբերաբար չի իրականացվում աշխատաշուկայի վերաբերյալ վերլուծություն: Համայնքում թափուր աշխատատեղերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկան համապատասխան մասնագետներ, այսինքն համայնքում կա առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն: Համայնքում պարբերաբար տարբեր մասնագետներ ունենում են վերապատրաստման կարիք, և չվերապատրաստվելով՝ աշխատաշուկայում մրցակցությունից դուրս են մնում:
--	---

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3.

«Վերականգնողական կենտրոն հաշմանդամություն ունեցող երեխաների համար»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Աջակցել Գորիս համայնքի հատուկ կարիք ունեցող երեխաների առողջապահական, սոցիալ-հոգեբանական, ֆիզիկական կարիքների բավարարմանը և նպաստել ներառական միջավայրի ստեղծմանը:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		30	50	70	90	110	110
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	3	4	5	6

	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		3	5	7	9	11	11
	3. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից						
	Կենտրոնի մասին տեղեկացված շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	1000	2000	3000	4000	5000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն						
	1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում						
	1.3. Գույքի և սարքավորումների ձեռք բերում և տեղադրում						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1 Մատուցվող ծառայությունների ցանկի հստակեցում						
	2.3 Մատուցվող ծառայությունների փաթեթի մշակում						
	2.3 Մասնագետների ներգրավում և վերապատրաստում						
	2.4 Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում						
	3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	3.1 Իրազեկման արշավների կազմակերպում						

	3.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում
Ծրագրի բյուջեն	28 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ
Ծրագրի հիմնական շահառուները	Հաշմանդամություն ունեցող երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սյունիքի մարզում՝ մասնավորապես Գորիս համայնքում, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների առողջապահական և սոցիալ-հոգեբանական վերականգնողական կենտրոնի բացակայության հարցը մնում է օրակարգային: Մարզում հաշմանդամություն ունեցող հարյուրավոր երեխաներ կան, որոնք մասնակի բուժում են ստանում մայրաքաղաքում, որն առաջացնում է սոցիալական խնդիրներ ընտանիքում: Երկարաժամկետ վերականգնման կարիք ունեցող երեխաները դուրս են մնում բուժման կուրսերից՝ հնարավորությունների բացակայության պատճառով: Միայն Գորիսի տարածաշրջանում՝ Գորիս (74), Տեղ (6), Տաթև (4) խոշորացված համայնքներում առկա պաշտոնական թվերով 138 երեխաներ կան, որից 66-ն ունեն հենաշարժողական խնդիրներ: Ինչպես նաև կան երեխաներ, որոնք չեն գնահատվել: 44-օրյա պատերազմից հետո ավելացել է նաև Արցախից տեղահանված 828 չգնահատված երեխա: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար մայրաքաղաքում առկա վերականգնողական ծրագրերն ու կենտրոնները հասանելի չեն մարզերի երեխաների համար: Ծնողների մեծ մասը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ Երևանում առկա ծառայություններն իրենց երեխաների համար հասանելի դարձնելու: Սյունիքի մարզը մայրաքաղաք Երևանից ամենահեռու գտնվող մարզն է, որն ավելի է դժվարեցնում մարզից համապատասխան երեխաների տեղափոխության հետ կապված խնդիրները: Մարզում չկան հարմարեցված մեքենաներ:

	Ներկայիս պայմաններում, կարելի ասել, որ հաշմանդամություն ունեցող երեխաները Սյունիքում՝ մասնավորապես Գորիս համայնքում, դատապարտված են անտեսման՝ անհրաժեշտ մասնագիտական վերականգնողական աջակցությունից օգտվելու հնարավորությունների բացակայության պատճառով:
--	--

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4.
«Տարեցների խնամքի և ժամանցի կենտրոն»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել Գորիս համայնքի տարեցների խնամքի, ժամանցի ապահովմանը և ակտիվ կենսակերպի կազմակերպմանը՝ երաշխավորելով արժանապատիվ և երջանիկ ծերություն:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		60	120	240	280	300	350
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	3	3	3	3
	2. Կենտրոնում առկա են տարեցների համար խնամքի և ժամանցի կազմակերպման ծառայություններ						
	Ծառայությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027

		1	3	5	5	5	5
	3. Տարեցներն ակտիվորեն մասնակցում են համայնքում կազմակերպվող հանրային և մշակութային միջոցառումներին						
	Հանրային և մշակութային միջոցառումների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	4	5	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն						
	1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում						
	1.3. Գույքի և սարքավորումների ձեռք բերում և տեղադրում						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1 Մատուցվող ծառայությունների ցանկի հստակեցում						
	2.2 Ծառայությունների փաթեթի մշակում						
	2.3 Մասնագետների ներգրավում և վերապատրաստում						
	2.4 Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում						
	3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	3.1 Համայնքում մշակութային կազմակերպությունների հետ համագործակցության ձևավորում						
	3.2 Մշակութային միջոցառումներին տարեցների մասնակցության ապահովում (տրանսպորտային ապահովում, իրազեկում)						
Ծրագրի բյուջեն	20 մլն դրամ						

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ
Ծրագրի հիմնական շահառուները	Միայնակ, հատուկ (խնամք, սոցիալ-հոգեբանական աջակցություն) ծառայությունների կարիք ունեցող տարեցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	Թոշակի անցնելը տարեցներին մղում է մեկուսացման, հանրային «անայխտանելիության» զգացման, անտեսման, նվազում է տարեցների սոցիալական ակտիվությունը, մոտիվացիան, որը ազդում է նաև նրանց ընտանիքներում ընտանեկան կոնֆլիկտների առաջացման վրա: Հասարակական կյանքում ակտիվ անձինք թոշակի անցնելուց հետո ապաստանվում են և իրենց մոտ զարգանում է ֆիզիկական, հասարակական կյանքին մասնակցելու անտարբերություն և պասիվություն: Պարտադիր թոշակի անցնելը, ստիպում է թոշակառուներին ապրել աշխատանքային ճգնաժամ, որը ազդում է նրանց հոգեբանության, ֆիզիկական պատրաստվածության, հաղորդակցման վրա: Ազդում է նրանց մոտիվացիայի՝ նոր հմտություններ ձեռք բերելու, հմտություններով երիտասարդների հետ կիսվելու վրա: Միևնույն ժամանակ տարեցները չեն կարողանում ապահովել իրենց լիարժեք առօրյան: Հնարավորություն չունեն հանդիպելու իրենց տարիքակիցների հետ, կազմակերպել իրենց ժամանցը: Համայնքում կան շատ տարեցներ, որոնք ունեն խնամքի և ուշադրության կարիք, որը չի պահանջում լուրջ բժշկական միջամտություններ, սակայն անհրաժեշտ են տարրական միջոցներ՝ խորհրդատվություն, հոգատար վերաբերմունք, մտերմիկ զրույց և ժամանց:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1.
«Գործարարության զարգացում համայնքում»
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրություն խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Տնտեսական աճ ու աշխատատեղերի ստեղծում						
		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3. Բարենպաստ բիզնես միջավայրի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	-	-	-	-	-
	4. Համայնքի տարածքում գործող կազմակերպությունների թվի աճ						
	Գործող կազմակերպությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		240	255	265	275	285	295
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ենթակառուցվածքների որակի և հուսալիության բարելավման ճանապարհով ներդրումների ներգրավում 1.2. Արտոնությունների տրամադրում ` նոր աշխատատեղերի ստեղծման պարագայում 1.3. Տեղական տնայնագործական արտադրողների արտադրանքի ցուցադրություն-վաճառք փառատոնների, տարբեր էքսպոների ժամանակ						

	1.4. Արտադրված է Գործարարական ապրանքանիշի գովազդում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ազդեցիկների զարգացում հատկապես գյուղական բնակավայրերում, լոբու, ավելուկի, սարի թելի, թթի օդու արտադրության խթանում 2.2. Բոլոր ծրագրերում տեղական ներուժի ներգրավում (օր.՝ շինարարություն) 2.3. Մարքեթինգ և շուկայի ուսումնասիրություն, խորհրդատվական աջակցություն սկսնակ ձեռներեցներին 2.4. Սպառման շուկաների հայտնաբերում, արտահանման աջակցություն 2.5. Տեղական արտադրանքի գովազդ
Ծրագրի բյուջեն	150 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համագործակից քաղաքների ու երկրների հետ կապեր, փորձառու մարքեթոլոգներ, դրամաշնորհներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճգնաժամային, պատերազմական իրավիճակ: Բնակչության գործարար գիտելիքների ու հմտությունների պակաս
Ծրագրի հիմնական շահառուները	Տեղական կազմակերպություններ, գյուղատնտեսության մեջ ներգրավվածներ, ներդրողներ, սկսնակ գործարարներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	«Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը» կնպաստի ոչ միայն զբոսաշրջային, այլև ոչ զբոսաշրջային ոլորտների զարգացմանը՝ շինարարական աշխատանքներում տեղական ներուժի ներգրավման և հյուրանոցներին մատակարարող ֆերմերային տնտեսություններին զարգացման ճանապարհով: Նախատեսվում է Տեխնոպարկի ստեղծում համայնքում, որը ոչ միայն ՏՏ ոլորտի զարգացման, այլև նոր ներդրողների ներգրավման և նոր աշտատեղերի

	ստեղծման լավագույն ազդակ կարող է դառնալ: Քույր քաղաքների հետ համագործագության շրջանակներում կարող ենք զարգացնել տեղական արտադրանքի խթանումը արտերկրում, նպաստել տեղական արտադրանքի արտահանմանը:
--	---

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2.
«Համայնքում նախադրոցական կրթության բարելավում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադրոցական և արտադրոցական դաստիարակություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի նախակրթարաններում կրթության և ծառայությունների որակի բարձրացում						
	Ծնողների բավարարվածությունը նախադրոցական կրթությունից	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		բավարար	լավ	լավ	գերազանց	գերազանց	գերազանց
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շենքային պայմանների բարելավում						
	Հիմնանորոգման կարիք ունեցող նախակրթարանների թիվը 11	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		9	6	2	0	0	0
	2. Մենղի որակի բարձրացում						
	Մեկ	Ելակետային	Թիրախային արժեքներ				

	երեխային բաժին ընկնող սննդի չափաբաժին ը	ին արժեք					
		2022	2023	2024	2025	2026	2027
		270	290	300	350	380	400
	3. Կրթության որակի բարձրացում, աշխատողների մոտիվացում						
	Մեկ աշխատողի միջին աշխատավ արժը	Ելակետայ ին արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		88312	95000	95000	100000	100000	110000
